

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի է ունենում մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն է շնորհում Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ տ. Գրիգորիս աբղ. Բունիաթյանին, տ. Մասիս աբղ. Գալստյանին և տ. Անանիա աբղ. Արաբաջյանին:

Մայր Աթոռի երիտասարդ միաբանները նախապես իրենց վարդապետական թեզերն էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնաժողովը, որի կազմում էին ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս Պարգև Շահբազյանը, քննելով ներկայացված ավարտաճառերը, իր զեկուցագիրը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի օրը, ժամը 11-ին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվում է «Կանոն մասնաւոր իշխանութեան» տվչության կարգի արարողությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների համապատասխան կատարմամբ, աստիճան առ աստիճան շնորհում է «աշակերտացն ճշմարիտ Բանին քարոզութիւն զմասնաւորն իշխանութիւն, որ է չորս աստիճան, ... յօրինեալ սրբոյն Գրիգորի Տայթևացւոյ ճշմարտութեան վարդապետի, գերահանճար հոետորի և անյաղթ ախոյենի սուրբ հաւատոյ»:

Մեր եկեղեցում «մասնաւոր վարդապետական գաւազան տալոյ» կարգը շատ գեղեցիկ և իմաստալից մի արարողություն է, որը միաժամանակ թեկնածուների իմացական և հոգեկան աճի և պատրաստության վկայությունն է, որով նրանք իրավունք են ստանում շնորհաբաշխությամբ «քարոզելոյ զԲանն կենաց ուղղամիտ քարոզութեամբ, յունկն հաւատացելոց», «ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս», պահելու «զպատուէր օրինագրութեանց հարցն սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ, ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ»:

Արարողության ավարտին տ. Թորգոմ սրբազանը մի գեղեցիկ խրատական է խոսում՝ շնորհավորելով նորընծա վարդապետներին:

Այնուհետև երիտասարդ միաբաններն իջնում են ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարան, վերակրկնում իրենց սրբազան ուխտը՝ անհանգիստ սիրով և անպայմանավոր հնազանդությամբ ծառայելու Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Վերադառնալով Մայր Աթոռ, նորընծա վարդապետները, տ. Թորգոմ արքեպս.-ի առաջնորդությամբ, ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Սրբության օրհնությունն ու շնորհավորանքը:

* * *



Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյան

Ավազանի անունով՝ Գրիգոր:

Ծնվել է 1946 թվականին Էջմիածնում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի № 1 միջնակարգ դպրոցում:

Հոգևոր ճեմարան է ընդունվել 1960 թվականին և ավարտել այն 1966 թվականին:

Ավարտաճառի նյութն է եղել «Ն. Շնորհալու «Յիսուս Որդի»»:

1965 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1969 թվականին՝ աբեղա:

1966—67 թթ. որպես ազատ ունկնդիր հետևել է Զագորսկի հոգևոր ակադեմիայի դասընթացին:

1969—71 թթ. իբրև հոգևոր հովիվ պաշտոնավարել է Ռոստովի հայոց եկեղեցում:

1971—73 թթ. պաշտոնավարել է Լիոնի հայոց եկեղեցում իբրև հոգևոր հովվի օգնական:

Վարդապետական թեզն է՝ «Եկեղեցիների միության հարցը էկումենիկ շարժման լույսի տակ և հայ եկեղեցու մասնակցությունն ու դիրքն այդ շարժմանը»:

* * *



Տ. Մասիս վրդ. Գալստյան

Ավազանի անունով՝ Արարատ:

Ծնվել է 1950 թվականին Էջմիածնում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի № 1 միջնակարգ դպրոցում:

Հոգևոր ճեմարան է ընդունվել 1963 թվականին և ավարտել այն 1969 թվականին:

Ավարտաճառի նյութն է եղել «Գևորգ Դ կաթողիկոսը և Թաշճյան ձայնագրությունը»:

1967 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1972 թվականին՝ աբեղա:

1972—73 ուսումնական տարեշրջանում հոգևոր ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և խազագրություն:

Վարդապետական թեզն է՝ «Մայր Աթոռի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցի կյանքն ու գործունեությունը և մատենագրական վաստակը»:

Տ. Անանիա վրդ. Արաբաջյան

Ավազանի անունով՝ Ալեսիք:

Ծնվել է 1951 թվականին Երևանում: 1958—68 թթ. սովորել և ավարտել է տեղի № 52 միջնակարգ դպրոցը:

Հոգևոր հեմարան է ընդունվել 1970 թվականին և ավարտել այն 1973 թվականին:

Ավարտական նյութն է եղել «Ռուս պրավոսլավ եկեղեցին»:

1972 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1973 թվականին՝ աբեղա:

1973—75 թթ. էքստեռն կարգով ավարտել է Զագորսկի հոգևոր ակադեմիայի քառամյա դասընթացը և այժմ սովորում է տեղի ասպիրանտուրայում:

Միևնույն ժամանակ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը 1973 թվականից առ այսօր հովվություն է անում Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում:

Վարդապետական թեզն է՝ «Ռուս եկեղեցու կրոնական-աստվածաբանական գրականությունը հայ առաքելական եկեղեցու մասին»:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝ մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով, և ցանկանում, որ նրանք նվիրումով և անշահախնդրությամբ ծառայեն Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն և Մայր Աթոռ ս. Էջմիածնին ու լինեն «մշակք առանց ամօթոյ»: